

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ  
«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի մայիսի 8-ի ՀՕ-297 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 7-րդ մասը լրացնելի հետևյալ բովանդակությամբ նոր՝ չորրորդ պարբերությամբ.

«Պարտադիր տասներկուամյա միջնակարգ կրթության իրավունքի իրացման համար սույն հոդվածի 7-րդ մասի առաջին պարբերությունում նշված տարիքային սահմանափակումը չի գործում քրեակատարողական հիմնարկներում՝ վեց ամիս և ավելի ժամկետով ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալների և/կամ կալանավորված անձանց համար, և այդ անձինք, իրենց ցանկության դեպքում, առանց տարիքային սահմանափակումների, կարող են իրացնել իրենց կրթության իրավունքը (միջնակարգ կրթություն ստանալ)՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետը և 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«ա. այլընտրանքային կրթական ծրագիր՝** առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների, ուսուցման կազմակերպման ձևերի, միջոցների և մեթոդների բազմազանությունն առաջարկող կրթական ծրագիր կամ կրթական ծրագիր, որն իրականացվում է քրեակատարողական հիմնարկներում գտնվող ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց համար՝ հաշվի առնելով այդ անձանց կրթական, մշակութային, սոցիալական, առողջական և այլ բնույթի առանձնահատկությունները, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների՝ տեղակայման, շենքային, տեխնիկական հագեցվածության, անվտանգության ապահովման և այլ բնույթի պայմանները, որն ապահովում է հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքները,».

**«10) հատուկ հանրակրթական դպրոց՝** կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ինչպես նաև հակասոցիալական վարք դրսևորող սովորողների համար հանրակրթական հիմնական ընդհանուր և (կամ) հանրակրթական հիմնական հատուկ ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության տեսակ կամ քրեակատարողական հիմնարկներում գտնվող ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց համար հանրակրթական հիմնական ընդհանուր և (կամ) հանրակրթական հիմնական առանձնահատուկ ծրագրեր իրականացնող՝ արդարադատության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության ենթակայությամբ գործող ուսումնական պետական հաստատության տեսակ:»:

**Հոդված 2.** Օրենքի 30-րդ հոդվածի՝

1. 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 26.16-26.18-րդ կետերով՝

«26.16) արդարադատության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության հետ համատեղ սահմանում է քրեակատարողական հիմնարկներում գտնվող ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց համար կրթական ծրագրերի՝ մշակման, ընդունման (հաստատման), ֆինանսավորման և իրականացման կարգը.».

«26.17) արդարադատության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության հետ համատեղ սահմանում է քրեակատարողական հիմնարկներում գտնվող ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց համար նախատեսված հատուկ հանրակրթական դպրոցի գործունեության կարգը.».

«26.18) արդարադատության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող

Նախարարության հետ համատեղ մշակում է քրեակատարողական հիմնարկներում գտնվող ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց համար նախատեսված այլընտրանքային կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման չափորոշիչները.»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը: